տատ. և անտի ի սպահան, ի սպահանու ի շիրաս, և ի շիրասու աստ։ Զայս առացեալ եցոյց ինձ զգիրսն վկայականս, մինն ի մեծաւորէն Հռոմայ, երկրորդն ի մեծաւորէն լիբանանու (յորս գրի, թէ վասն շինելոյ մեր զվանս ի հռօմ՝ անկաք ընդ մեծամեծ պարտիւք. և դարձեալ գրի, թէ վասն աղքատութեան մերոյ՝ ոչ է մեզ հնար պարապիլ յիմաստութիւնս, վասն որոյ խնդրեմք յաստուածասիրացդ ողորմիլ մեզ ևն.)։ Երրորդն գիր օրհնութեան ի կաթուղիկոսէն... և չորրորդն է յընդհանրական քննչէ առաքելոյ ի պապէն ի լիբանան հինգ ամօք յառաջ վասն միաբանելոյ զերկու ուղղափառ կաթուղիկէ եպիսկոպոսունս հռոմոց՝ որ ի լիբանան. (իբր զի յընտրելն զկաթուղիկոս հռոմոց, ոմանք միումն հաւանեալ, և ոմանք այլումն՝ բաժանեալ է կաթուղիկոսութիւն նոցա, և վասն այսորիկ առաքեալ է պապն զքննիչ յորոշել զիրսն)։ Սա գնացեալ ի լիբանան պատահի հայ կրօնաւորացն. և տեսեալ անդ զմանկունս ոմանս յուսումն պարապեալ, հարցանէ նոցա, թէ ուստի՞ է ապրուստն ձեր. և նոքա ասեն, ոչ ուստեք, բայց եթէ ի լերանց անտի, և այն սակաւ յոյժ՝ մինչ ոչ կարել լիով յուսումն պարապիլ։ Եւ նորա խորհուրդ տուեալ, ասէ, առաքեսջիք զոմանս յայլևայլ կողմանս աշխարհիս, որպէս մառոնիքն առնեն. և յուսամ թէ բազում ինչ կարէք ժողովել ի պիտոյս կարօտութեան ձերոյ ի դիւրութիւն ուսման։ Ցայսմանէ յորդորեալ նոցա առաքեալ են զհայրն աբրահամ ի հընդկաստան, և զհայրն անդրէաս յայլ կողմանս. և այժմ յայս կողմանս ևս ընդ հ. մատթէոսին։ Զայսոսիկ լուեալ իմ ի նոցանէ, ես ևս գովեալ զյօժարութիւն նոցին, ուրախացայ ընդ նոսա, և խոստացայ ևս ձեռնտու լինիլ նոցա որչափ հնար է ինձ. և ամենայն սիրով ծառայել յօժարութեան նոցին...

Ղուաստ ծառայ

Ցամի տեառն 1770 ի յունիսի 8 ի Պասրա

Հ. Միքայէլ Զամչեանց, վարդապետ

ՄՂԶ.

Ջրհեղեղ մը՝ բառին կատարեալ իմաստովը, որ տեղի ունեցեր է այս թուականին՝ Պաշպալովի և շրջականերու մէջ՝ Ցօն գետի և այլ ջուրերու ողողումով ու եռամսեայ յամառ և յորդահոս անձրևներով։ Ներկայ վաւերագիրը ընդարձակ և հետաքրքրական նկարագրութիւնն է այդ երևելի աղէտալից դէպքին։

Գերապատիւ աբբայ հօրն իմում բազում սիրով և խոնարհութեամբ ողջոյն ի Քրիստոս Յիսուս

... զպատկերն ջրհեղեղին մեք աստէն ականատես եղաք...։ Աճումն ջրոյն սկսաւ ի գիշերի ծննդեան տեառն, ի միում գիշերի այն ահագին ծովանման գետն թունայ մի մարդապոյ բարձրացաւ, որ չէ բնաւ եղեալ, յետոյ դադարեցաւ այնպիսի սաստիկ աճումն, այլ յաւուրն թզաչափ և մատնաչափ աճէր մինչև ցհոգեգալստեան երկրորդ օրն և ելից զամենայն դաշտս, զգիւղօրէ անթիւս տապալեաց. այլ մեզ մինչև ցայն օր էր խաղաղութիւն, լսէաք միայն զտառապանս այլոց, զփախչիլն ի լերինս, զանասնոց կոտորածս և ցաւէաք միայն։ Բայց յերկրորդում աւուր հոգեգալստեան յանկարծակի ի չորից կողմանց պաշարեաց զմեզ ջուրն և եմուտ ի քաղաքն հեղեղօրէն. երկիրն ոչ կարէր օգնել ծծելով զջուր, և յառաջոյ կողմանէ արգելեալ էր անցք ջրոյն վասն բարձրութեան ջուրցն սաւային, թիսային և մօրուշին. ով ամենակարող տէր. զիարդ դիւրին է նմա ի միում վայրկենի զաշխարհս ամենայն կորուսանել. սաստիկ է հրդեհն, այնպէս կարծէի, բայց ջրոյն բռնութիւն անցանէ զանցանէ զնովաւ, զի ի հրոյ կարես փախչել, այլ ի ջրոյ որ չուրջ չուրջանակի պատեալ է, ո՞ւր կարես փախչել. աստ էր տեսանել զանհնարին աղէտս տարակուսանաց ամենայն մարդկան, մայրն զզաւակն մատղաշ առեալ ի տանէ ի դուրս